ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՍԼՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 45.6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ սույն գործով խնդիրը չի առնչվում միայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող հոդվածին, անհրաժեշտ է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա պարզել նաև «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում և մի շարք ենթաօրենսդրական ակտերում առկա որոշ անորոշությունների հետ կապված հանգամանքները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Հետաձգել գործի դատաքննությունը և այն վերսկսել 2014 թվականի ապրիլի 18-ին, ժամը 10.00-ին:
2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2013թ. ՍԴԱՈ-88 աշխատակարգային որոշման 1-ին կետը:
3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով սույն գործի դատաքննությանը հրավիրել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ սահմանադրական դատարանի անդամների որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տալու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 մարտի 2014 թվականի
ՍԴԱՈ-10